ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<04>> ----------08----------2025թ. N ՄՈ/761 -Ա

ք. Արմավիր

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ «ՎԱՐԴԱՆԱՇԵՆԻ ՄԱՅԻՍ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 37.1-ին, 37.2-րդ և 37.3-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 1653-Ա հրամանով ձևավորած մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 16-ին կայացած նիստի N 327 արձանագրությունը.

ո ր ո շ ո ւ մ ե մ՝

1. Դավիթ Մինասյանին նշանակել «Վարդանաշենի Մայիս Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, 2025 թվականի օգոստոսի 4-ից նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 1 տարի փորձաշրջանով՝ համաձայն հավելվածի:
2. Փորձաշրջանի ղեկավար նշանակել «Մեծամորի N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նունե Գևորգյանին:
3. Փորձաշրջանի ղեկավարին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 1653-Ա հրամանով

ձևավորած մասնագիտական հանձնաժողովին ներկայացնել տնօրենի աշխատանքների գնահատման թերթիկը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Восстановимая подпись

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099

X

Подписано: NIKOGHOSYAN BARSEGH 2808860099 **Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**